ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1959 Общественные науки

Լ. Գ. Խաչերյան

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Դասական հայերենում հանդես են գալիս այնպիսի նախադասություններ, որոնք միմյանց նկատմամբ շարահյուսական բազմապիսի հարաբերությունների մեջ են գտնվում. սակայն այդ հարաբերությունները դրսևորելու համար նրանցում չեն օգտագործվում ձևաբանական հատուկ միջոցներ՝ շաղկապներ կամ հարաբերական բառեր։ Նման կառուցվածք ունեցող նախադասությունները շարահյուսագիտության մեջ կոչվում են անշաղկապ բարդ նախադասություններ։

Անշաղկապ բարդ նախադասությունները նույնպես ունեն իրենց ձևն ու բովանդակությունը, որոնք արտահայտվում են յուրահատուկ կերպով։ Անշաղկապ բարդ նախադասությունների ձևն ստեղծելուն բանավոր խոսքում մեծապես նպաստում և նույնիսկ, կարելի է ասել, վճռական ու որոշիչ նշանակություն է ունենում առոգանությունը, որի շնորհիվ պարզ նախադասությունները պրկվում են միմյանց անկախ և ինքնուրույն վիճակից, ձեռք բերելով ներքին միասնություն և իմաստային սերտություն։ Իսկ գրավոր խոսքում (որը մեր ուսումնասիրության բուն առարկան է) պարզ նախադասությունների կապակցման ձևական արտաքին ցուցանիշների բացակայությունը հենց է՛ անշաղկապ բարդ նախադասությունների ձևը։

Մասնավորելով մեր խոսքը ստորադասական բնույթ կրող անշաղկապ բարդ նախադասությունների մասին, նկատում ենք, որ նրանք բովանդակության տեսակետից բնորոշվում են գլխավոր և երկրորդական մասերի շարահյուսական կախվածությամբ և պայմանավորվածությամբ։ Գրավոր խոսքում պարագայական (ինչպես և առհասարակ) անշաղկապ նախադասությունների ճանաչման և նրանց բնույթի որոշման ու դասդասման հիմք է ծառայում հենց այդ գլխավոր և երկրորդական նախադասությունների շարահյուսական ներքին փոխհարաբերությունը, որը բացահայտվում է ստորադասական հարաբերությամբ՝ կախվածությամբ ու պայմանավորվածությամբ։

Հատկանշական է այն, թե քերականական ի՛նչ միջոցներ են օգտագործվում անշաղկապ բարդ նախադասությունների կառուցման համար։ Նշենք, որ շաղկապավոր և հարաբերական բառեր ունեցող բարդ նախադասությունների կազմությանը մասնակցում են ոչ միայն իրրև ձևական ցուցանիշներ գործող շաղկապներն ու հարաբերական բառերը, այլև գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, դերանունների և եղանակավորող բառերի առկայությունը, բայական եղանակների և ժամանակների հատուկ կիրառությունը, առոգանությունը և այլն։ Սակայն քերականական այդ միջոցների դերն ու նշանակությունը երբեք էլ նույնական չեն. եթե շաղկապներն ու հարաբերական բառերը, իրրև երկրորդական նախադասությունները գլխավորին կա-

պակցող և նրանց շարահյուսական ֆունկցիան որոշող միջոցներ, առաջնակարգ, վճռական նշանակություն ունեն շաղկապավոր բարդ նախադասությունների դեպքում, ապա շարադասությունը, բայական եղանակների և ժամանակների նշանակությունը, առոգանությունը և այլն համեմատաբար օժանդակ, նպաստող բերականական դեր են կատարում այս կամ այն շարահյուսական ֆունկցիան դրսևորելու համար։

Մինչդեռ անշաղկապ բարդ նախադասությունների դեպքում՝ ընդհակառակն, առաջնակարգ ու որոշիչ նշանակություն են ձեռք բերում շարադասությունը, բայական եղանակների և ժամանակների խաղացած դերը, առոգանությունը և այլն։ Ի դեպ՝ անշաղկապ բարդ նախադասությունների կառուցման ժամանակ բերականական միջոցների աղքատությունը, մանավանդ ձևական ցուցանիշների բացակայությունը, սահմանափակում է իմաստային երանգների ճոխությունն ու նրբությունը, որոնցով առանձնապես հարուստ են շաղկապավոր բարդ նախադասությունները։ Բացի դրանից, երբեմն նույնիսկ դժվար, այլև անհնարին է լինում անշաղկապ բարդ նախադասության բնույթը որոշել՝ նրա գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև առկա շարահյուսական կախվածությունն ու պայմանավորվածությունը շատ թույլ արտահայտված լինելու պատճառով։ Այդ նշանակում է, որ անշաղկապ նախադասությունների շարահյուսական հնարավորությունները չափազանց սահմանափակ են՝ շաղկապավոր բարդ նախադասությունների համեմատությամբ։ Ավելին, այստեղ պետք է հաշվի առնել նաև դասական հայերենի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունը. գրաբարի ծաղկման շրջանի հայերենը նախադասություններ կազմելիս աչքի է ընկնում շաղկապների օգտագործման առատությամբ և նույնիսկ ծայրահեղ ծանրաբեռնվածությամբ։ Գրաբարում համարյա բոլոր նախադասությունները (անկախ նրանից, թե խոսքը վերաբերում է նոր սկսվող պարբերության կամ նախորդք ասված մեջ հայտնի երևույթի, եղելության, և կամ արդեն ավարտված մտքին նախորդող թե հաջորդող նախադասություններին) սկսում են շաղկապներով, նույնիսկ շատ անգամ ստորադասական շաղկապով սկսվող բարդ նախադասության կառուցվածքը կիսավարտ է լինում, երկրորդական և գլխավոր նախադասությունների միջև համադասական շաղկապ[1] անհարկի միջամտության պատճառով։ Այս երևույթը գրաբարի խոշոր գիտնականներ Ա. Այտընյանն ու Վ. Զալբինյանը մասամբ բացատրում են երբայերենի (հին առամերենի) ազդեցությամբ. նրա ասումածանչի դասական հայերենով թարգմանությունն մեջ յուրաքանչյուր նախադասության սկզբում հոգ շաղկապի գործածությունը վերագրում են նրա շարահյուսական կառուցվածքի [illegible] Ասվածից հետևում է, որ դասական հայերենում շաղկապների գործածությունը, անկասկած, հանդիսացել է այն հիմնական գործոնը, որ անշաղկապ բարդ նախադասություններ հանդես գան իրենց բոլոր տարատեսակներով։ Ելնելով այս հանգամանքից, պարադիգմատիկ անշաղկապ բարդ նախադասությունները նկարագրելիս, մենք կանդ կառնենք դրանցից առավել տիպական և յուրաքանչյուր տարատեսակների վրա, որոնք իրենց դրսևորմամբ համեմատաբար հաճախադեպ են։

---

[1] Հերբերական ոճով շատ հաճախ է և-ի գործածությունն, որ ուրիշ շաղկապներու և հարաբերականներու տեղ ալ կգրվի։ Վ. Զալբինյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1883, էջ 139։

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակի անշաղկապ երկրորդական նախադասություններ շատ սակավ են կիրառվում դասական հայերենում, հակառակ այն ակներև փաստի, որ շաղկապավոր ժամանակի պարագա նախադասությունները իրենց բազմազանությամբ ու ժամանակային հարաբերությունների բացահայտման հարուստ նրբերանգներով էական տեղ են գրավում պարագա երկրորդական նախադասությունների համակարգում։

Ժամանակի անշաղկապ երկրորդական նախադասությունների հազվադյուտ լինելը կարելի է բացատրել երկու հանգամանքով. առաջին՝ ժամանակային ամենատարբեր հարաբերություններ նշելու համար լեզուն անպայման կարիք ունի սպասարկու բառերի, ուստի և այլ կերպ նրանք չեն կարող դրսևորվել։ Հենց այդ է պատճառը, որ ժամանակի անշաղկապ նախադասությունները զրկված են ժամանակային տարբեր հարաբերություններ ցույց տալու հնարավորությունից և նախասահմանված են միայն մեկ ժամանակային հարաբերություն արտացոլելու ունակությամբ. այլ կերպ ասած՝ նրանք նկարագրում են միմիայն ժամանակային հաջորդականություն, ընդ որում այդ հաջորդականությունն էլ մեծ մասամբ ստորադասական բնույթ է կրում։ Նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը բացահայտվում և որոշվում է միայն երկրորդական նախադասության շնորհիվ։

Երկրորդ, ժամանակի տրոհվող պարագայի բնույթ են կրում այն դերբայական դարձվածները, որոնք իրենց կազմում ունեն ի *և* ընդ *նախդիրով անորոշ դերբայի հայցական։ Հայտնի է, որ գրաբարը հարուստ է եղել նախդիրներով, որոնք չափազանց մեծ դեր են կատարել դասական հայերենի շարահյուսական համակարգում և կիրառության խիստ օրինաչափ բնույթ են ունեցել։ Հայոց լեզվի զարգացումը, սակայն, ընթացել է այդ նախդիրների հետագա կրճատմամբ և ի վերջո անհետացմամբ։*

Ինչպես կարելի է նկատել դասական հայերենի լեզվական փաստերից, ի *և* ընդ *նախդիրներով և անորոշ դերբայի հայցականով հանդես եկող դերբայական դարձվածները, որոնք թեև զուրկ են ստորոգյալի ձևաբանական արտահայտությունից, աշխարհաբար թարգմանելիս մերթ ընկալվում են իբրև տրոհվող ժամանակի պարագա, մերթ էլ ուղղակի իբրև ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ։ Ինքնին հասկանալի է, որ նման կառուցվածքի դերբայական դարձվածները հիմնականում իրենց վրա վերցնելով անշաղկապ ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների ֆունկցիան, զգալապես նվազեցնում են բուն անշաղկապ ժամանակի պարագա հանդիսացող նախադասությունների դրսևորման հնարավորությունը։ Համեմատի՛ր.*

«Տգէտ և անընտրող առաջնորդ՝ ի բժշկելն *խոցէ, և* յուղղելն *խորտակէ. ի սիրոյ տեղ ատելութիւն ցուցանէ, և յատելութեան՝ զսէր. և խառնափնդորելով գեղքարսն անվաստակ հանէ» (Եղն., ԵԱ, 218)։*

«Ի նուաճել *խիւանց ձայնիցն, իբրև յայտնեալ հռչակ հարկանէր» (Բուզ. ԴՀ, 188)։*

«Ընդ առաւօտանալն *ծածկեցաւ տեսիլն» (Ագաթ., ԴՀ, էջ 392)։*

Սակայն ժամանակի բուն անշաղկապ երկրորդական նախադասությունները դասական հայերենում արտահայտվում են հիմնականում երկու եղանակով.

ա) Գլխավոր նախադասության ստորոգյալը, իբրև կանոն, արտահայտված է լինում անցյալ դերբայով և չի ժխտական մասնիկով ու ևս ժամանակի մակբայով, ըստ որում երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվում է գլխավոր նախադասության ընթացքի մեջ եղող գործողության որևէ մի մոմենտում։ Շարադասության տեսակետից նման կարգի անշաղկապ բարդ նախադասություններում իբրև գլխավոր նախադասություն հանդես է գալիս առաջադաս նախադասությունը, իսկ երկրորդական՝ վերջադաս նախադասությունը.

«Եւ իջեալ գունդն Հայոց ի Վիրս և բանակեալք յառաջադրեալ տեղիսն, և չեն ևս անցեալ աւուրք երեք կամ չորք՝ զայր հասանէր Միհրան և բանակէր դէմ յանդիման բանակին Հայոց, մօտ ի բանակն յայնկոյս գետոյն, զոր Կուր գետն անուանեն» (Փարպ., 133)։

Ուշադրավ է, որ երկրորդական նախադասության բազմակի ստորոգյալները թեև դրվել են սահմանական եղանակի անցյալի անկատարով, սակայն չեն կիրառվել իրենց բուն նշանակությամբ. նրանք հանդես են եկել սահմանական եղանակի անցյալ կատարյալի (աորիստի) համարժեքով։

բ) Ժամանակի անշաղկապ պարագա նախադասությունների առավել հատկանշական տարատեսակը նրանք են կազմում, որոնք լինելով պարզ նախադասությունների ներքին միասնություն ունեցող հաղորդումներ, միմյանց նկատմամբ շարահյուսական կախվածություն և պայմանավորվածություն են հանդես բերում. գլխավոր նախադասության ժամանակը բացահայտվում է միայն երկրորդական նախադասության գործողության ժամանակով. ըստ որում նման նախադասությունները թեև երևութապես մոտենում են համադասական նախադասություններին, սակայն միայն առաջին հայացքից այդպիսին են. իրականում այդ պարզ նախադասությունների միջև եղած շարահյուսական հարաբերությունը միանգամայն անհամազոր, ուստի և ստորադասական, բնույթ ունի։ Բացի այդ, գլխավոր է համարվում այն նախադասությունը, որը հետադաս է լինում, իսկ երկրորդականը, իբրև կանոն, միշտ նախադաս։

«Տեսանիցես զխաղս և զխնեոյս այլոց, զկամաս և զկտուրիւնս, յիշեսջիր զնորա արտասուսն» (Ոսկ. հ. 1, 660)։

«Կոխեսցուք զխայթոցս չարակնութեան, անձանց օգուտ գործեմք, սիրելիք, ի մեր գլուխ առնումք զպսակն» (Ն. տ. 653)։

Երբեմն պատահում են նաև այնպիսի անշաղկապ նախադասություններ, որոնք իրենց բնույթով պայմանա-ժամանակային հարաբերություն են նշում. այդ դեպքում մեծ մասամբ երկրորդական նախադասությունը հարցական բնույթ է կրում.

«Կամիցի՞ս ուրախ առնել, տրտմեաց ընդ յաղթութիւն եղբարն որ նմա յաղթեաց, զնորա տրտմութիւն փարատես քո խոժոռութեամբն» (Ոսկ. հ. 1, 651)։

ՊԱՅՄԱՆԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանի անշաղկապ նախադասությունների կառուցման համար հիմնական ու որոշիչ դեր են կատարում գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների բնույթը, նրանց եղանակային և ժամանակային տարբեր

հարաբերությունները, ինչպես նաև շարադասությունը, մասամբ էլ երկրորդական նախադասության հարցական լինելը։

ա) Ընդհանուր օրինաչափություն է, որ պայմանի անշաղկապ երկրորդական նախադասությունները միշտ, որպես կանոն, դրվեն առաջադաս, իսկ գլխավոր նախադասությունները՝ հետադաս։

«Կամի՞ս զեղեցիկ երևել. զգեցիր զողորմութիւն, զգեցիր զմարդասիրութիւն, զգեցիր զցածութիւն և զանհպարտութիւն» (Ոսկ. հ. 1, 641)։

«Թլփատեա՞լ ոմ կոչեցաւ. մի ցանկասցի անթլփատութեան. յանթլփատուրենէ՞ ոմ կոչեցաւ. մի թլփատեսցի» (Թուղթ առ Կորնթ. է, 18)։

բ) Այս տիպի անշաղկապ բարդ նախադասություններում գլխավոր նախադասության ստորոգյալը սովորաբար հրամայական եղանակով է դրվում՝ մերթ բուն (ներկա) հրամայականով, մերթ էլ արգելականով.

«Թշնամանի՞ չ ես և բամբասող և բանսարկու, գրեա՛ քեզ առանձին օրէնս, մի բարկանար և մի աղաղակեր ամենևին, և զոյգ ընդ արմատոյն և պտուղն ես ի բաց բարձեալ լինի։ Գէ՞ճ իցես և անառակ, ի՛ր դարձեալ քեզ սահման առ ի չհայելոյ քեզ ի գեղ կանանց, և մի ի թէատրոն ընթացցիս և մի ի հրապարակի զդեղ օտար զննիցես» (Ոսկ. հ. 2, 136)։

Շատ հազվադեպ պատահում է նաև հորդորական հրամայականով (ապառնի)։

«Ուսուցիչ ինչ կամիցիս լինել, ուսջիր նախ զհանդարտութիւն. այլ մինչև քո բեզ յաղթեալ իցէ, այլում իշխան լինել մի յօժարեր»։ (Եւագր, 60)։

Եզակի դեպքերում հանդիպում է նաև սահմանական եղանակի ներկա անկատարով.

«Մտանես ողորմութիւն առնուլ, պարտիս նախ դու ողորմել» (Ոսկ. հ. 1. էջ 177)։

գ) Երկրորդական նախադասության ստորոգյալը համեմատարար ապատ է. նա կարող է դրվել սահմանական եղանակի ներկա անկատարով.

«Բարեմտութեամբ կամիս կեալ զկեանս քո, մի ընդ բազումս անկանիր» (Եւագր, 59—60)։

«...չկարե՞ս անձրև ածել, մի բամբասիցես. չկարե՞ս կերակրել. մի թշնամանիցես» (Ոսկ. հ. 1, 54)։

Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է հանդես գալ նաև ստորադասական եղանակի 1-ին ապառնիով.

«Կամիցի՞ս գիտել և այլ միւս ևս այսր չարութեան հաղորդակից, հայեաց ընդ Դալիդա» (Ոսկ. հ. 2, 616)։

Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է հանդիպել նաև բաղադրյալ ժամանակով, վաղակատար-հարակատար ներկա բայաձևով.

«Կապեա՞լ ես ի կին, մի խնդրեր արձակել. արձակեա՞լ ես ի կնոջէ. մի խնդրեր կին» (Թուղթ առ Կորնթացիս Ա. գլ. է, 27)։

Երբ խոսքը վերաբերում է անցյալ ժամանակակետում կատարված փաստի կամ պայմանի առկայությանը, ստորոգյալը կարող է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով դրված լինել.

«...ուրացար զդիրս, գոնեա ի դիւաց պատկառեա» (ՍԵԳՍ, 153)։

Մատա՞լ կոչեցար, մի փոյթ լիցի քեզ» (Թուղթ առ Կորնթ. Ա. գլ. է, 21—22)։

դ) Ինչպես կարելի է նկատել վերոբերյալ օրինակներից, երկրորդական նախադասությունների գերակշիռ մասը արտահայտված է հարցական բնույթով։

Այդ նշանակում է, որ անշաղկապ պայմանի նախադասությունները հարց-պատասխանային առոգանությամբ են օժտվել. երկրորդական նախադասությամբ տրված հաղորդումը ենթադրվում է իբրև թեական պայման, այդ պատճառով էլ հարցական բնույթ է կրում, իսկ գլխավոր նախադասությամբ տրված հաղորդումը անմիջական պատասխանն է, հանդիսանում այդ թեական պայմանի՝ հենց պատասխանի մեջ էլ պարփակելով երկրորդական նախադասությունից բխող հնարավոր եզրակացությունը (տե՛ս վերևի օրինակները)։

ե) Անշաղկապ պայմանի բարդ նախադասություններում երկրորդական և գլխավոր մասերի ստորոգյալները մեծ մասամբ դրվում են երկրորդ դեմքով. այս հանգամանքը նույնպես ուշագրավ է, որովհետև այն առավել անմիջական և կոնկրետ բնույթ է հաղորդում պայմանի շարահյուսական իմաստին (համեմատի՛ր վերևի օրինակները)։

ՊԱՏՃԱՌԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական հայերենում համեմատաբար շատ են հանդիպում պատճառի անշաղկապ նախադասությունները։ Այդ տիպի բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական մասերը սոսկ իրենց ներքին իմաստային հարաբերությամբ պատճառա-հետևանքային շարահյուսական հասկացություն են արտահայտում։ Նման կառուցվածքի դեպքում գլխավոր նախադասության գործողությունը ստացվում է իբրև արդյունք, հետևանք մի այլ գործողության, որը պարփակված է երկրորդական նախադասության մեջ. վերջինս պատճառ է հանդիսանում առաջինին։ Պետք է ընդգծել, որ շարադասությունը այս տիպի բարդ նախադասության մասերի միջև խստիվ կայուն է. պատճառային հարաբերություն ցույց տվող երկրորդական նախադասությունը միշտ գլխավորին հետադաս է լինում։ Այս կանոնը այնքան օրինաչափ է, որ պատճառա-հետևանքային անշաղկապ նախադասությունների կառուցման մեջ շարադասությունն է վճռական դեր կատարում. եթե փոխենք շարադասությունը՝ երկրորդական նախադասությունը առաջադաս դարձնելով, գլխավորը՝ հետադաս կդիտվի նաև նրանց շարահյուսական ֆունկցիան, այս անգամ գլխավոր նախադասությունը կկատարի պատճառի երկրորդական նախադասության պաշտոնը, իսկ երկրորդականը՝ նրա գործողությունից իբրև հետևանք առաջացող գլխավոր նախադասություն։ Համեմատիր՝

«Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ» (Թուղթ առ Եբրայեցիս, գլ. Ա, 5)։

«Ես այսօր ծնայ զքեզ, որդի իմ ես դու»։

Մեծ մասամբ պատճառի անշաղկապ նախադասություններ են կազմվում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտում է ներքին հուզաշարժի որևէ զգացական ապրում, իսկ երկրորդական նախադասությամբ տրվում է նրա պատճառաբանությունը։

«Մի երկնչիր, Աբրահամ, ես վերակացու եղէց քեզ, և վարձք քո բազում եղիցին յոյժ» (Ծնունդք, գլ. 3Ե, 1)։

«Երկնչիմ ի ձէնջ, զուցէ թէ ի զուր ինչ վաստակեցի ի ձեզ»։ (Թուղթ առ Գաղատացիս, գլ. Դ, 11)։

«Վացցում այժմ... այս լալումն առաքինութեան է, և այն անօգուտ մտաց». (Ոսկ. հ. 1, 498)։

Պատճառա-հետևանքային հարաբերություն նշող անշաղկապ բարդ նախադասության գլխավոր և երկրորդական մասերի ստորոգյալները միայն դիմավոր բայաձևերով են լինում, իսկ դերբայական ձևերը համարյա թե բացառվում են, ըստ որում դիմավոր բայաձևերով արտահայտված ստորոգյալներն, իրենց եղանակային և ժամանակային կիրառությամբ, ազատ են։ Համեմատիր

«Եւ արդ այդպէս մեղմեխես, չգիտես թէ այդպիսի բանք պատճառք արծաթասիրութեան» (Ոսկ, հատ. 1, 242)։

«...և ասէ ցՍիմովն Յիսուս, Մի երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսայցես ի կեանս» (Ղուկ. գլ. Ե, 10)։

ՆՊԱՏԱԿԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասությունների մեջ առավել մեծ տարածում ունեն նպատակի նախադասությունները, որոնք իրենց ձևավորմամբ հետևյալ առանձնահատկություններն ունեն. գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի գործողություն կամ եղելություն այն իմաստով, որպեսզի հաջորդ (երկրորդական համարվող) նախադասության մեջ հաղորդվող գործողությունը կամ եղելությունը իրագործվի. ըստ որում նպատակի շարահյուսական իմաստը բացահայտվում է սոսկ գլխավոր և երկրորդական նախադասությունների ներքին իմաստային հարաբերությամբ, ինչպես նաև դիմավոր բայաձևերի հատուկ կիրառությամբ։

Անշաղկապ բարդ նախադասության գլխավոր մասի ստորոգյալը կարող է ազատ լինել եղանակային և ժամանակային հարաբերության տեսակետից, սակայն երկրորդական նախադասությունը, որը կատարում է նպատակի շարահյուսական ֆունկցիա, որպես կանոն, պետք է անպայման ստորադասական եղանակի 1-ին կամ 2-րդ ապառնիով դրված լինի։ Այդ նշանակում է, որ նպատակի իմաստը դրսևորելուն, իրրև քերականական հիմնական միջոց, ծառայում են բայաձևերի միայն ըղձական իմաստով կիրառված ստորադասական եղանակը և ապառնի ժամանակը։

«Ապաշաւեա դու ի չարեացդ քոց յայդցանէ, և աղաչեա զՏէր, որեւս որդուիւն լիցի քեզ ի մեղմեխ խորհրդոց սրտի քոց» (Գործք Առաքելոց, գլ. Ը, 22)։

Ուշագրավ է երկրորդական նախադասության կազմում որեւս եղանակավորող բառի առկայությունը, որը նպատակի շարահյուսական իմաստին հաղորդում է հնարավորության իմաստ։

«Մի կարի յաճախեր ոտիւք քովք առ բարեկամ, գուցէ յագիցի քեզ և ատիցէ զքեզ» (Առակք Սող., գլ. ԻԵ, 17)։

«Եւ ասէ Աբրահամ, Զդոյշ լեր, մի դարձուցանիցես զորդի իմ անդր» (Ծնունդք, գլ. ԻԴ, 6)։

Վերջին օրինակում մի մասնիկը պարզապես հավասար է այստեղ ոչ, չ... ժխտականին և իր բայի բնույթը երբեք չի փոխվում նրա առկայությունից և չի վերածվում հրամայականի, այլ մնում է ըղձական եղանակի ժխտական իմաստով («վերադարձնել չտաս»)։

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտված լինի սահմանական եղանակի ներկա անկատարով, ապա վերջինս նպատակի շարահյուսական ֆունկցիան կատարելիս ոչ թե հանդես է գալիս իրրև այդպիսին,

իր բուն արժեքով, այլ՝ 1-ին կամ 2-րդ ապառնու փոխարեն, ըղձական եղանակի ապառնի ժամանակի համարժեքով։ Համեմատի՛ր՝

«...կորեա ի բաց զարմատն, չլինի պտուղ» (Ոսկ. հ. 1, 505)։

ՀԵՏԵՎԱՆՔԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևանքի անշաղկապ նախադասությունները նույնպես հարազատ են դրաբարի դասական շրջանի շարահյուսական համակարգին։ Այդ կառուցվածքն ունեցող բարդ նախադասություններում գլխավոր մասի ստորոգյալով տեղի է ունենում այնպիսի գործողություն, որից իբրև հետևանք բխում է երկրորդական նախադասության գործողությունը։ Պետք է նշել, որ այս տիպի բարդ նախադասությունները իրենց շարահյուսական իմաստով շատ սերտ առնչություն ունեն համադասական բարդ նախադասությունների հետ և նրանց այդ ընդհանրությունը այնքան ակնբախ է, որ շատերը դրանք համարում են ուղղակի համադասական բնույթի նախադասություններ։ Այդ տեսակետի հիմնավորման համար նրանք ելնում են այն հանգամանքից, որ հետևանքի երկրորդական նախադասությունը չի լրացնում գլխավոր նախադասության որևէ անդամին, ուստի և չի կարող «կրճատվել» կամ «պարզվել»։ Սակայն մենք գիտենք, որ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքում երկրորդական նախադասությունները լրացնում են ոչ միայն գլխավորի որևէ անդամին, այլև նրա ամբողջ ծավալին. հետևաբար երկրորդական նախադասության լրացում լինելը գլխավորի ամբողջ ծավալին՝ դեռևս բավարար հիմք չէ այն համադասական համարելու։ Հետևանքի անշաղկապ նախադասության դեպքում հաշվի ենք առնում գլխավորի և երկրորդականի ներքին իմաստային փոխհարաբերությունը դոմինանտության տեսակետից, եթե հետևանք նշող նախադասությունը նկարագրում է մի այնպիսի գործողություն, որը իր բնույթով առաջանում է իբրև արդյունք իրեն նախորդող նախադասության գործողության, ապա այստեղ առկա է ստորադասական հարաբերություն։

«Տրտում է ոգի իմ մինչև ի մահ, կացէք աստ և սկեցէք ընդ իս» (Մատթ., գլ. ԻԶ, 38)։

«Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առնիր զդա» (Ղուկ., գլ. Ը, 49)։

ՁԵՎԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական հայերենում շատ քիչ են հանդիպում ձևի անշաղկապ նախադասությունները, որոնք բացահայտում են գլխավոր նախադասության գործողության մի հանգամանքը՝ կատարման եղանակի տեսակետից։ Այս դեպքում նման կառուցվածքի բարդ նախադասությունները ունենում են հետևյալ առանձնահատկությունները. գլխավոր նախադասությունը միշտ առաջադաս է լինում, իսկ երկրորդական նախադասությունը՝ հետադաս. ըստ որում ձևի շարահյուսական իմաստի դրսևորման համար, իբրև կանոն, պարտադիր կերպով գլխավոր նախադասության մեջ պետք է հանդես գա այսպէս հարաբերյալը, հակառակ պարագային մենք չենք ունենա ձևի անշաղկապ երկրորդական նախադասություններ։ Նման հանգամանքներում երկրորդական նախադասությամբ կոնկրետացվում, պարզաբանվում և կամ էլ բացահայտվում է գլխավոր նախադասության մեջ հանդես եկած պարագայական բառը։ Համեմատիր՝

...և գրէ ի փոխման թղթոյս այսպէս. Հարցանէ վողջունէ ձերմէ Ներկի-սոս... (Եղս. Կես., Պե, 443)։

«Ի սոյն գիրս դարձեալ Կղեմէս վասն կարգի աւետարանացն խօսելով՝ ըստ ուշութեան երիցանց անտի առաջնոց դնէ այսպէս. նախ գրեցան, ասէ, աւե-տարանքն...» (Ն. տ. 450)։

ԶԻՋԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զիջական անշաղկապ նախադասությունները կիրառության սեղմ ոլորտ ունեն դասական հայերենում. շարահյուսական այս իմաստի դրսևորմանը բերև քերականական միջոց ծառայում են գլխավոր և երկրորդական նախադասու-թյունների բովանդակային հակադրությունը, ստորոգյալների կիրառու-թյան հատուկ եղանակը և շարադասությունը. ըստ որում գլխավոր նախադա-սության գործողությունը կատարվում է հակառակ երկրորդական նախադա-սության գործողությունից տրամաբանորեն բխող հետևության։ Այս տիպի բարդ նախադասության մասերի միջև շարադասությունը կայուն է. անշաղկապ երկ-րորդական նախադասությունը, իբրև կանոն, դրվում է գլխավորին նախա-դաս։

«Նավուցեալ են աչք մտաց մերոց և մարմնոց, բարբաջեմք, ղայլ այլս խօսիմք» (Ոսկ. Հ. 2, 530)։

Ուշագրավ են այն կազմությունները, որոնց երկրորդական նախադասու-թյունները թեև առանց ստորադասական շաղկապի են, բայց գլխավոր նախա-դասությունները իրենց բառաշարքի սկզբում ունեն համադասական բնույթի ներհակական շաղկապ, որն ընդգծում է գլխավոր նախադասության «հակա-ռակ հիմունքի» հասկացությունը բովանդակելը։

«Այո, ասէ, դեղեցիկ ըմբերանես, բայց զխնդիրն ոչ լուծանես» (Ոսկ. Հ. 2, 706)։

«...Շում բիւր չարչարանս ընդունելով ի տէրունական տանէն ոչ կայ ի բաց. վարի և հալածի, սովի շուն առ դրունս տեառն իւրոյ և ոչ հեռանայ ի տանէ տեառն» (Ն. տ. 696)։

Նկատենք, որ և շաղկապը այստեղ հանդես է եկել ներհակական իմաս-տով և շարահյուսական հոմանիշ է սակայն, բայց, այլ շաղկապներին։

Կառուցվածքի յուրօրինակ բնույթ ունեն այն բարդ նախադասությունները, որոնց զիջական նշանակությունը ստացվում է երկրորդական նախադասության ստորոգյալի առանձնահատուկ կազմությամբ, առանց զիջական շաղկապների մասնակցության՝ մի կողմից, իսկ գլխավոր նախադասությունները երկրորդա-կանին կապվում են ներհակական իմաստի համադասական շաղկապներով մյուս կողմից։ Բնորոշ է, որ սույն տիպի բարդ նախադասությունների երկրոր-դական մասի դիմավոր ստորոգյալը, իբրև կանոն, լինում է անորոշ դերբայով կազմված իր խնդրի բայաձևով։

«Իսկ այն ցանկութիւն՝ բոլոր բոլոր ցանկութիւն, այլ ամօթոյ և պատժոցն ակն ունի. և յայսմ՝ կալ կայ աշխատութիւն, այլ յոյս հատուցմանն առնէ թեթեւ զաշխատութիւնն» (Ոսկ. Հ. 1, էջ 21)։

«Իսկ յԱրտաշիսէ մինչև ի ժամանակս մեր՝ գրել գրեցաւ ամենայն, բայց չէ այնպէս հաւատարիմք որպէս զառաջինսն, առ ի չգոյէ ճշգրիտ կարգի յա-ջորդութեան մարգարէիցն» (Եվս. Կես., Պե. 174—5)։

Ինչպես կարելի է դիտել վերոբերյալ փաստերից, այս կարգի բարդ նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերի փոխհարաբերությունը, շարադասության առումով, նույնպես խստիվ կայուն է. երկրորդական նախադասությունը միշտ առաջադաս է լինում գլխավորին.

«Զբազաւորացն անուանս զումարել զումարել լոկ (պատմագիրն), բայց զգործս ինչ նոցա ոչինչ ճշդիւ պատմէ, կամ թէ շառնէ իսկ արժանի յիշելոյ, եթէ անտի թիւ թագաւորացն կարդիցի (Քրոնիկոն, մաս 1, 6)։

«Ո՞չ դիտէք եթէ որ յասպարիսին ընթանան. ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն» (Թուղթ առ Կորնթ., գլ. Թ. 24)։

* *

Քննության առնելով դրարարի դասական շրջանի անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքը՝ իր ընդհանուր գծերով, հանգում ենք հետևյալ եզրակացություններին։

ա) Անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքում գլխավոր և երկրորդական նախադասությունների իմաստային փոխհարաբերությունը բացահայտվում է շնորհիվ նրանց միջև առկա շարահյուսական կախվածության և պայմանավորվածության, իմաստային ներքին սերտության։

բ) Ի տարբերություն շաղկապավոր և հարաբերական բառերով կազմված բարդ ստորադասական նախադասությունների, որոնց երկրորդական նախադասությունները իրենց շարահյուսական հիմնական պաշտոնը կատարելով հանդերձ սովորաբար օժտված են լինում հարակից բազմապիսի իմաստներով, անշաղկապ բարդ նախադասությունների դեպքում նրանց երկրորդական նախադասությունները հիմնականում արտահայտում են շարահյուսական մեկ իմաստ։ Բայց վերջիններս օժտված են նաև մի քանի դրական կողմերով. նրանց շարահյուսական իմաստը ընկալվում է, շնորհիվ առոգանության, ավելի անմիջական, զգացմունքային և կենդանի եղանակով։

գ) Անշաղկապ բարդ նախադասությունների կազմությանը, իբրև քերականական միջոց, մասնակցում և վճռական նշանակություն են ունենում շարադասությունը, բայական եղանակների և ժամանակների հատուկ կիրառությունները, առոգանությունը, հարաբերյալների և եղանակավորող բառերի առկայությունը և այլն։

դ) Դասական հայերենի շարահյուսական համակարգը բնորոշվում է դերազանցապես շաղկապավոր և հարաբերական բառերով կառուցված բարդ նախադասությունների հարուստ և զարգացած սիստեմով, որի նկատմամբ անշաղկապ բարդ նախադասությունները իրենց տարատեսակներով համեմատաբար շատ աննշան տեղ են գրավում։ Այդ փաստը, իր հերթին, նշանակում է, որ դասական հայերենը կանգնած է եղել իր ժամանակի քաղաքակրթված ժողովուրդների լեզվական մակարդակին՝ ի վիճակի լինելով ամենատարբեր վերացական գաղափարներ, բարդ ու նրբին մտքեր մարմնավորել շաղկապավոր բարդ նախադասությունների համակարգի շնորհիվ։ Այս հետևության համար հիմք է ծառայում ընդհանուր լեզվաբանության այն պնդումը, ըստ որի զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող լեզուները բնորոշվում են սովորաբար պարզ նախադասությունների շարահյուսական համակարգով և մտքի կոնկրետությամբ պայմանավորված անշաղկապ բարդ նախադասություններով։